ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում:

Հետազոտող ուսուցիչ՝ Արևիկ Բաղալյան
Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Լուսինե Բալայան

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ 4

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 6

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՉ-ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԿԵՐՊԱՐԸ, ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 7

ԳԼՈՒԽ 2

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեզ հարկավոր է, որ աշակերտը ոչ միայն հասկանա բառերը և նոցա մասերը, այլև իրերը, առարկաները և նոցա մասերը, որպեսզի ոչ միայն կարողանա պատմել յուր լսածն ու կարդացածը, այլև նկարագրել իր տեսածը…

Ղազարոս Աղայան

Ամեն դարաշրջան իր խնդիրներն ու պահանջներն է թելադրում դպրոցին: Կրթական նոր քաղաքականությամբ կարևորվում է ուսուցչի դերը՝ որպես բովանդակության մշակողի, որպես նորարարի: Կրթակարգը ուսուցչի գործունեության ուղեկիցն է լինելու: Մեծանում է ուսուցչի պատասխանատվությունը: Նա իր մեթոդական պատրաստականությունն ու գիտելիքները հարստացնելու խնդիր ունի: Նա պետք է ապահովի պետության ակնկալիքները հանրակրթությունից: Սերունդները հաջորդում են սերունդներին և փոխվում է նրանց հետաքրքրությունների շրջանակը, նրանց պահանջները, կրթության մասին վերաբերմունքը, փոխվում են իրենք, փոխվում է արժեքային համակարգը: Եվ ուսուցիչները տեղեկատվության հոսքի աճին զուգընթաց սկսում են նոր տեղեկությունները նորովի ուսուցանելը, կյանքում կիրառելի գիտելիքներով ու կարողություններով օժտված անհատ ձևավորելը: Սա է պատճառը, որ ուսուցիչն իր աշխատանքին զուգահեռ պարբերաբար վերապատրաստվելու, մասնագիտական նորություններին և դասավանդման նոր մեթոդներին ու ռազմավարություններին ծանոթանալու հնարավորության կարիք ունի :

Թեմայի արդիականությունը՝ առանձնապես կարևորելով հանրակրթության պետական կրթակարգում ընդգծված պահանջը կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորման վերաբերյալ՝ կանգ ենք առել երեխաների ուսումնառության ընթացքում արժեքային համակարգի ձևավորման վրա: Այս հարցին հարկավոր է անդրադառնալ յուրաքանչյուր դասի նպատակները նշելիս ու ձևակերպելիս: Դրանք ընդհանուր բնույթ չպիտի ունենան, այլ խիստ որոշակի և հստակ:

Հետազոտության նպատակը՝ բացահայտել առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման գործընթացի էությունը:

Հետազոտության խնդիրները՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,

2. վերլուծել դասապրոցեսը

3. սահմանել արժեքային համակարգի ձևավորման ուղիները

4. սերտորեն համագործակցել գործընկերների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Համաշխարհային կրթական զարգացումներում նկատվում են հանրակրթության բովանդակության ձևավորման և ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման նոր մոտեցումներ, որոնք որդեգրվում, ներմուծվում են նաև ազգային ուսուցման համակարգ:

Հայաստանում կրթության արդիականացման գործընթացը մեկ տասնամյակի պատմություն ունի: Այս ընթացքում լուրջ փոփոխություններ են կատարվել հանրակրթական համակարգի կառուցվածքում, մշակվել է կրթության մասին օրենքը, ստեղծվել ու շարունակվում են ստեղծվել նոր կրթական ծրագրեր, ուսումնական պլաններ, դասագրքեր:

Կրթության նկատմամբ ժամանակակից պահանջների իրականացման և նրա սոցիալական դերի բարձրացման համար անհրաժեշտ է կրթական համակարգի արդիականացում, ինչպես նաև կրթության նկատմամբ պետության, հասարակության և անհատի ունեցած վերաբերմունքի փոփոխություն: Արժեքային համակարգի ձևավորումը դիտարկելով որպես ուսուցման գործընթացի անբաժանալի մասնիկ անդրադառնանք այն մանկավարժ գիտնականներին , ովքեր գտնում են , որ առարկայի դասավանդմանը զուգահեռ ձևավորվում է արժեքային համակարգ: Այս բնագավառում կարևոր նշանակություն ունի Վ . Վ. Կրաևսկու հետազոտությունները: Անդրադառնալով արժեքային համակարգի ձևավորմանն ու կրթության բովանդակությանը նա սահմանում էր հետևյալ սկզբունքները:

Առաջինը հասարակության պահանջներին համապատասխանության սկզբունքն է, որը խնդիր է դնում ուսուցման գործընթացում ներդնել ու կիրառել ուսուցման՝ դաստիարակող և զարգացնող ֆունցիաների անհրաժեշտությունը:

Երկրորդ սկզբունքը բովանդակային և գործընթացայնության հաշվառման ֆունկցիան է: Սա նշանակում է՝ ուսումնական առարկայի կամ նյութի նախագծման ժամանակ հաշվի առնել ուսուցման մեթոդների, օրինաչափությունների , սկզբունքների բոլոր հնարավորությունները: Ուսուցման ծրագրերում և դասագրքերում բովանդակության հետ միասին հաշվի առնել նրա հաղորդման և յուրացման եղանակների ընձեռած հնարավորությունները:

Երրորդ՝ կառուցվածքային միասնության սկզբունք նրա ձևավորման տարբեր մակարդակներում: Այսինքն տեսական պատկերացում ունենալ ուսումնական առարկայի , նյութերի, մանկավարժական գործունեության, աշակերտի անձի մասին: Այս սկզբունքը յուրաքանչյուր ուսումնական առարկայի ներկայացուցչից պահանջում է միասնական մոտեցում ունենալ կրթության բովանդակության կառուցման նկատմամբ[1]:

[1] М. Н. Скаткин, Проблемы современной дидактики, 2-е изд.- Москва, 1984, стр. 56,

Իսկ ահա Յու Կղ Բաբանսկին, անդրադառնալով այս հարցին, սահմանել է մի շարք չափանիշներ։ Դրանք են՝

-կրթության բովանդակության մեջ համակողմանի զարգացած անձի ձևավորման խնդիրների ամբողջական արտացոլման չափանիշներ,

- գիտությունների հիմունքների մեջ մտցվող բովանդակության բարձր գիտականության և գործնական նշանակության չափանիշը,

-տվյալ տարիքի դպրոցականների ռեալ ուսումնական հնարավորություններին համապատասխան բովանդակության բարդության չափանիշը,

-տվյալ ուսումնական առարկայի ուսումնասիրության համար բովանդակության ծավալի ունեցած համապատասխան ծրագիրը,

-կրթության բովանդակության կառուցման միջազգային փորձի հաշվառման չափանիշը,

-ժամանակակից դպրոցի ուսումնամեթոդական և նյութական բազայի համապատասխանության չափանիշը[1]։

Այս հարցը հուզել է նաև այլ մանկավարժ գիտնականներին։ Նրանց շարքում են Ջ Դյուին, Վ. Օկոն, Ա. Մատյուշկինը, Դ. Բ. Էլկոնին, Մ. Ի. Մախմուտովը և ուրիշներ։ Սակայն նպատակահարմար ենք գտնում հիմք ընդունել Յու. Կ. Բաբանսկու և Մ. Ն. Սկատկինի ուսումնասիրությունները։

[1] Ю. К. Бабанский, Оптимизация уч.- воспитат. процесса. метод. основы, М.,1982, стр. 63,

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Սահմանելով մեր քայլարշավը նախ անդրադարձել ենք հետազոտող- ուսուցչի կերպարին, տվել այն հարցի պատասխանը, թե ինչպիսի՞ արժեքային համակարգի կրող պետք է լինի ուսուցիչն ինքը, որպեսզի կարողանա առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգ ձևավորի: Կարևորել ենք դաստիարակության և ուսուցման գործընթացները և դրանք դիտարկել ենք որպես անբաժանելի երևույթներ, այսպիսով լուծելով որոշակի մանկավարժական խնդիրներ:Մենք գտնում ենք, որ այնպիսի կարևոր գործընթաց ինչպիսին է սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը, անհնար է պատկերացնել առանց դաստիարակության և բուն դասապրոցեսի համադրման, ուստի երկրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է դաստիարակությանը և արժեհամակարգի ձևավորմանը:

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՉ-ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԿԵՐՊԱՐԸ, ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հասարակության որակը կախված է զարգացած, կրթված անհատներից, որոնք պետք է կազմեն հասարակության բովանդակային կորիզը, պետք է պատասխանատու և ծանրակշիռ լինեն ոչ միայն իրենց մասնավոր կյանքի ու կյանքի որակի համար՝ անհաղորդ ու անտարբեր մնալով հասարակությանը և ազգային խնդիրներին, այլև պետք է լինեն ակադեմիական հիմնարար գիտելիքներով զինված, մեր ժամանակների նորագույն ձեռքբերումներին քաջատեղյակ, ազգային գործոնն առաջ մղող, մարդկային բարձր արժանապատվությամբ և շրջահայեցությամբ օժտված առաջնորդներ, որոնք կհամալրեն հանրային կյանքի բոլոր բնագավառները:

Բարեփոխությունների անշրջելի ընթացքը ժամանակակից կրթական համակարգի առանձնահատկությունն է: Կրթական ոչ մի համակարգ չի կարող արդյունավետ գործել համաշխարհային կրթական գործընթացներից դուրս և այդ ամենից մեկուսացած: Գիտության, տեխնիկայի աննախադեպ առաջընթացը նոր մոտեցումներ ու պահանջներ է սահմանում նաև կրթամշակութային ոլորտի համար:

Օրվա հրամայականն են դառնում ուսուցման նոր մեթոդների որոնման, կրթության բովանդակության նորացմանը միտված աշխատանքները: Անընդհատ փոփոխվող աշխատանքային միջավայրում, արագորեն վերակազմավորվող աշխատաշուկայում ավելի ու ավելի է կարևորվում որակյալ ուսուցման և որակյալ մասնագետների պահանջը, ինչը բնականորեն նպաստում է հանրակրթության դերի բարձրացմանը: Կրթությունը դառնում է հասարակության զարգացման խթանիչ ուժ՝ միաժամանակ ապահովելով նաև մարդկային համակեցության ներդաշնակ պայմաններ հասարակության բոլոր շերտերի համար: Հանրակրթության ոլորտում տեղի ունեցող համակարգային փոփոխությունները, որոնք պայմանավորված են համաշխարհային զարգացումներով, ենթադրում են ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և վերաիմաստավորում, կրթության ոլորտում ազգային առանձնահատկությունների և միջազգային փորձի արդյունավետ համադրում: Այս 2 պայմաններում արդեն կարևոր խնդիր է դառնում պետական-ազգային մտածողություն ունեցող և կյանքի արագընթաց զարգացումներին հաղորդակից անհատի ձևավորումը, ինչի իրականացմանն էլ պետք է ուղղված լինի կրթական քաղաքականությունը: Բայց նախ և առաջ ուսուցիչն ինքը պետք է լինի այդպիսին: Անդրադառնանք ուսուցչի կերպարին և դերին:

Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:

Տեսությունը, որը չի հիմնվում պրակտիկայի վրա, անհիմն է, և կրում է մտահայեցողական բնույթ: Մանկավարժական հետազոտությունը ինքնանպատակ չէ,այն պետք է արտացոլի առաջավոր փորձը, ստուգվի պրակտիկայում և նպաստի ուսումնադաստիարակչական խնդիրների լուծմանը: Առանց պրակտիկ գործունեության խոր և համակողմանի վերլուծության անհնար է նախանշել ուսումնադաստիարակչական գործընթացի զարգացման ուղիները:

Մանկավարժական մեթոդաբանության մեջ կարևոր է հիմնախնդրի նկատմամբ ստեղծագործական մոտեցման սկզբունքը: Փորձը ցույց է տալիս,որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն: Հետազոտության ընթացքում պետք է որոնել նոր տվյալների, երևույթների փաստարկված բացատրություն, համալրել և ճշտել առկա տեսակետները, չվախենալ գիտական համարձակության դրսևորելուց: Ստեղծագործական մոտեցման սկզբունքը սերտորեն կապված է օբյեկտիվության սկզբունքի հետ: Հետազոտողի վարպետությունը այն է, որ ուղիներ և միջոցներ գտնի երևույթների էության մեջ թափանցելու համար, չդրսևորելով սուբյեկտիվություն, սրա հիմքը մարդկանց պրակտիկ գործունեությունն է: Մանկավարժական հետազոտության արդյունավետությունը մեծապես կախված է մանկավարժական գործընթացների ու երևույթների համակողմանի ուսումնասիրությունից: Մանկավարժական ցանկացած երևույթ կապված է այլ երևույթների հետ, դրանց միակողմանի ուսումնասիրումը, կարող է սխալ եզրակացությունների հանգել: Նշված սկզբունքը հնարավորություն է տալիս ուսումնասիրվող երևույթը մոդելավորել և հետազոտել բազմաբնույթ կապերի ու հարաբերությունների հետ: Հետազոտվող հիմնախնդրի, գործընթացի, երևույթի նկատմամբ համալիր մոտեցումը ենթադրում է սահմանել բոլոր կապերն ու առնչությունները, հաշվի առնել արտաքին բոլոր ներգործությունները, բացառել պատահական գործոնները: Մանկավարժական հետազոտության մեջ կարևոր նշանակություն ունի պատմականության և տրամաբանականության միասնության սկզբունքը: Օբյեկտիվ երևույթի ճանաչողությունը և տրամաբանական հիմնավորումը սերտորեն պայմանավորված են նրա պատմության իմացությամբ և հասարակական-պատմական գործընթացի իմաստավորումը: Համակարգվածության սկզբունքը ենթադրվում է ուսումնասիրվող օբյեկտը դիտարկել որպես համակարգ, բացահայտել բոլոր բաղադրատարրերի փոխպայմանավորվածություն և պատճառահետևանքային կապերը: Մանկավարժական հետազոտություններում մեթոդաբանական կարևոր դեր դիալեկտիկայի հիմնական հասկացությունները՝ էությունը, երևույթը, պատճառն ու հետևանքը, անհրաժեշտությունն ու պատահականությունը, հնարավորությունն ու իրականությունը, ձևը ու բովանդակությունը: Մանկավարժական հետազոտություններում կիրառվում են նաև սկզբունքային այլ պահանջներ ու մոտեցումներ, որոնք պետք է հաշվի առնվեն հետազոտողի կողմից: Անձի գործունեության ակտիվության սկզբունքը հետազոտողի ուշադրությունը

շեշտադրում է նրան, որ ոչ միայն միջավայրն է ձևավորում անձին, այլ անձն է ճանաչողության և աշխարհի վերափոխման ակտիվ սյուբեկտը: Ըստ զարգացման սկզբունքի – մանկավարժական երևույթները դիտարկվում են մշտական փոփոխության, շարժման, հակասությունների լուծման մեջ:

Ամբողջական մոտեցում – պահանջում է մանկավարժական գործընթացում հաշվի առնել անձի ամբողջական բնութագրիչները, անձը բարդ համակարգ է, որին ներհատուկ է անհատականությունը, անկրկնելիությունը:

Որպեսզի հասնենք ցանկալի արդյունքի, մենք սահմանել ենք որոշակի քայլարշավ.

1.ստեղծել ենք բարյացակամ միջավայր,

2.ապահովել, որ բոլորի ձայները լսելի լինեն,

3.ընտանիքներին ընձեռել ենք մեզ հետ համագործակցելու հնարավորություն,

4.առաջնորդվել ենք մեր աշակերտների անհատական կրթական կարիքներով,

5.աջակցություն ենք ստացել դպրոցի տնօրենից՝ համագործակցել կոլեգաների հետ, մասնակցել դասապրոցեսներին, փոփոխել դասացուցակը

6.համատեղ դասավանդում սկսել ենք փոքր քայլերից, նախ վերցրել ենք մեկ առարկա՝ մայրենի, հետո աստիճանաբար , սովորողների համար աննկատ կերպով նաև համատեղել մնացած առարկաները դասավանդող ուսուցիչների ջանքերը:

ԳԼՈՒԽ 2

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Դաստիարակությունը դաստիարակողի և դաստիարակվողների նպատակաուղղված, նպատակասլաց գործունեության ընթացքն է, որի շնորհիվ լուծվում են դաստիարակվողների անձի ձևավորման, զարգացման հիմնախնդիրները[1]:

Կարելի է ասել՝ դաստիարակությունը նպատակասլաց ներգործությունների ամբողջական համակարգ է: Այն մանկավարժական գիտության շատ դժվարին բնագավառներից է, որն ունի մի շարք առանձնահատկություններ:

Արժեքային համակարգի ձևավորման մասին խոսելիս նպատակահարմար ենք գտնուում նախ անդրադառնալ դաստիարակությանը և կարևորելով բարոյական, հայրենասիրական, աշխատանքային դաստիարակությունը կարող ենք տալ հստակ սահմանում՝ արդյոք ո՞րն է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման գործընթացի էությունը:

Հաշվի առնելով դաստիարակության առանձնահատկությունները, իսկ դրանք են՝

-օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հանդես գալը

- միանգամից չերևացող կողմը

- երկարատևությունը

-կոմպլեքսային բնույթը

-երկկողմանի բնույթը

-ամբողջական բնույթը

Կարող ենք նշել, որ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ընթացքում դրսևորվում է դաստիարակությունն իր բոլոր առանձնահատկություններով : Այսպիսի հետևություն մենք արել ենք դասապրոցեսի ընթացքում արժեքային համակարգի ձևավորման ժամանակ :

Անդրադառնանք նախ բարոյական դաստիարակությանը: Բարոյական դաստիարակությունը հասարակական գիտակցության այն ոլորտներից է , որը կյանքի բոլոր բնագավառներում մարդկանց վարքը կարգավորելու գործառնություն է կատարում[2]:

1 Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,էջ 275,

2 Նույն տեղում, էջ 356,

Կ. Դ. Ուշինսկին բարոյական զարգացումն ավելի բարձր է գնահատում,քան մտավոր զարգացումը[1]։

Կրտսեր տարիքում բարոյական զարգացման առանց կամ հիմք կարող են հանդիսանալ այն նորմերը, որոնք համամարդկային արժեքներ են։ Կրտսեր տարիքում բարոյական զարգացման հիմքը երեխաների մեջ հումանիստական հարաբերությունների ու փոխհարաբերությունների ձևավորումն է։ Հետևապես տարրական դասարաններում դասվարի խնդիրն այդ պետք է լինի։ Հենց այդ տարիքում է , որ երեխան պետք է ըմբռնի, որ ինքը չի կարող ապրել միայնակ, հասարակությունից, մարդկանցից կտրված։ Որ մարդկանց հետ հաղորդակցումը , շփումը, փոխհարաբերությունները դեպի մարդասիրությունը տանող – անապարհներն են։ Ուրեմն՝ ամեն կերպ պետք է ձգտել դրանք դարձնել կրտսեր դպրոցականներիամենօրյա արարքների առանցքը՝ գերմանացի փիլիսոփա Ա. Շոպենհաուերը ասում էր. «Մենավոր մարդը թույլ է, ինչպես լքյալ Ռոբինզոնը...»։ Որո՞նք են ուսուցչի պարտականությունները։ Առաջին՝ երեխային զինել բարոյականությանը վերաբերող տեսական գիտելիքներով, այդ նպատակով օգտագործել ուսումնական առարկաների ընձեռած բոլոր հնարավորությունները, երկրորդ՝ հաճախակի կազմկարպել բարոյական թեմաներով զրույցներ , դասախոսություններ և բանավեճեր։ Դասապրոցեսի ընթացքում անդրադառնալ այս կամ այն թեմայի բարոյական կողմին, որը լավագույնս հնարավոր է իրականացնել «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների դասավանդման ընթացքում։

Այժմ անդրադառնանք աշխատանքային դաստիարակությանը։ Դպրոցում աշխատանքային դաստիարակությունը ներառում է՝

ա) ուսումնական աշխատանքը,

բ) պոլիտեխնիկական գիտեիքների, կարողությունների ու հմտությունների ձեռքբերումը,

գ) ուսումը

դ) տեխնոլոգիա և կերպարվեստ առարկաները

Ուսումնական աշխատանքը այն հիմնական բաղադրատարրն է, որը հնարավորություն է ընձեռում դպրոցականներին նախապատրաստվել գործնական աշխատանքի և պատրաստակամ լինել աշխատելու ժողովրդի և հայրենիքի համար։ Ուսուցման ընթացքում սովորողները ձեռք են բերում հենակետային գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ , որոնք կարևոր նշանակություն ունեն նրանց գործնական աշխատանքի նախապատրաստելու համար։

[1] К. Д. Ушинский , Педагогика, М., 2019, стр. 48,

Ուսման ընթացքում և նրա միջոցով դպրոցականները , ուսուցչի ղեկավարությամբ և ինքնուրույնաբար ուսումնասիրում են ուսումնական առարկաները, ձեռնարկները, սկզբնաղբյուրները , անընդհատ համալրելու իրենց գիտելիքները, զարգացնում իրենց իմացական կարողությունները։ ։ Ուսմանն օգնում են ժամանակակից տեղեկատվության միջոցները։

Հարկ ենք համարում նշել, որ տեխնոլոգիա առարկայի հիմնական առաքելությունը սովորողների ժամանակակից տեղեկատվական արդյունաբերական համակարգում ինքնուրույն աշխատանքային կյանքի նախապատրաստելն է , կիրթ, ստեղծագործ, նախաձեռնող և ակտիվ անձնավորություններ դաստիարակելը, ինչը համարվում է կարևոր արժեքներից մեկը։ Աշխատանքը ոչ թե վկայություն է ընդունակությունների բացակայության մասին, այլ, ընդհակառակը, ընդունակությունների զարգացման հաստատուն երաշխիք է, այսպես են գտնում հոգեբանները[1]։

Եվ, իհարկե, արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ ենք համարում հայրենասիրական դաստիարակությունը։ Առանց հայրենիքի , առանց հարազատ ժողովրդի մարդը լքյալ է, ինչպես Ռոբինզոնը։ Ցիցերոնն ասում էր. «Մեզ համար թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի մեջ՝ հայրենիք»։

Դպրոցը, ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները։ Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի , հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի , ազգի սովորույթների նկատմամբ։ Անկախ տարիքից հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի , ավանի , քաղաքի , հայրենի բնաշխարհի նկատմամբ։ Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ։

Ինչպե՞ս ենք մենք սովորողների մեջ սերմանում հայրենասիրությունը և ձևավորում արժեքային համակարգը։ Մենք գտնում ենք, որ սովորողների հայրենասիրական դաստիարակության համար կարևոր դեր են խաղում մեծ հայրենասերների, ֆիդայինների, Անդրանիկի, Նժդեհի, Դրոյի, Թևանի ապրած կյանքն ու գործունեությունները, Սարդարապատի հերոսներ Դանիել Բեկ և Պողոսբեկ Փիրումյանների , Սիլիկյանի անմոռաց կերպարները, Ղարաբաղյան պատերազմում անմահացած հերոսների , աշխարհահռչակ զորավարներ Բաղրամյանի,

[1]Հ. Ղաջոյան, Երեխաները տարիքն ի վեր,Երևան,2002, էջ 56,

Բաբաջանյանի, Խանփերյանի, Իսակովի հավերժող օրինակները և , իհարկե, 44-օրյա պատերազմում անմահացած մեր հերոսներն իրենց սխրանքներով, որոնց շարքում են Ալբերտ Հովհաննիսյանը, Շահեն Գալստյանը, Ալեն Մարգարյանը, Էդվարդ Բաբայանը: Այսպիսի նվիրյակների մասին հարկավոր է պատմել սերունդներին, կազմակերպել միջոցառումներ, էքսկուրսիաներ, հանդիպումներ զոհվածների ընտանիքների հետ, որովհետև ոչ հեռավոր անցյալում հայ ժողովրդի ծոցից ելան նոր դավիթներ և առյուծ ձևող նար մհերներ, որոնք իրենց հայրենասիրությամբ անջնջելի հետք և մեծ անուն թողեցին մեր պատմության էջերում:

Բացի վերը նշվածից, սովորողների մեջ արժեքային համակարգ և հայրենասիրական դաստիարակություն ձևավորում ենք գերբի, դրոշի, օրհներգի, զինանշանի, մեր ժողովրդի պատմության, գրականության, մշակույթի ուսումնասիրության միջոցով, գրողների, գիտնականների, արվեստագետների հետ հանդիպման արդյունքում , որը մենք իրականացնում ենք պարբերաբար: Մայրենիի տարրական դասընթացի խնդիրը կրտսեր դպրոցականների լեզվամտածողության և տրամաբանության, մտածելակերպի, ուսումնառության և համագործակցային տարրական կարողությունների, համակեցության պարզ ունակությունների ձևավորումն է, ազգային և համամարդկային արժեքների ձեռբերումը:

Երեխայի ծավալած ուսումնական գործունեության արդյունավետությունը, աշակերտների վերաբերմունքը հետագա ուսման նկատմամբ և նրանց բոլոր հաջողությունները հետագա գործունեության ընթացքում պայմանավորված են նաև դպրոցական առաջին օրերի մանկավարժահոգեբանական տեսանկյունով ճիշտ կազմակերպմամբ, այն այն առանձնահատկությունների հաշվառմամբ, որոնք հատուկ են 6 տարեկան երեխաներին[1]: Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել նրանց զարգացումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:

Չնսեմացնելով մտավոր, գեղագիտական, ֆիզիկական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակության դերը, այնուամենայնիվ, փորձի արդյունքում գրանցել ենք հետևյալ պատկերը:

1 Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015,



1- ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2- ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
3- ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
4- ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
5- ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
6- ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Առաջին վեցնյակը

Յուրաքանչյուր դասի ժամանակ որոշակի դաստիարակչական խնդիրներ եմ լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (խմբային, անհատական, էքսկուրսիա, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ եմ դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ կազմակերպած խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորեցին ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ , ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:

2. Փորձը ցույց է տալիս,որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն:

3.Արժեքային համակարգի ձևավորման գործում բացառիկ է բարոյական դաստիարակության դերը:

4. Կրտսեր տարիքում բարոյական զարգացման հիմքը երեխաների մեջ հումանիստական հարաբերությունների ու փոխհարաբերությունների ձևավորումն է:

5. Կրտսեր դպրոցականների մեջ արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում բոլոր առարկաների դասավանդման ընթացքում, առավելապես՝ Մայրենիի :

6. Մայրենիի տարրական դասընթացի խնդիրը կրտսեր դպրոցականների լեզվամտածողության և տրամաբանության, մտածելակերպի, ուսումնառության և համագործակցային տարրական կարողությունների, համակեցության պարզ ունակությունների ձևավորումն է, ազգային և համամարդկային արժեքների ձեռբերումը:

7. Սեփական գիտելիքների հարստացումը, կարողությունների և հմտությունների դրսևորումը և կոլեգաների հետ համագործակցությունը բացառիկ դեր ունեն սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ժամանակ:

8. Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել սովորողների զարգացումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005

Ջ. Գյուլանիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015Հ. Ղաջոյան, Երեխաները տարիքն ի վեր, Երևան, 2002

Скаткин М. Н. , Проблемы современной дидактики, 2-е изд.- Москва, 1984 Бабанский Ю. К., Оптимизация уч.- воспитат. процесса. метод. основы, М.,1982,Ушинский К. Д., Педагогика, М., 2019,